

ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՄՇՏԱՊԵՍ ՀՇՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ՝

Եթե հայերի կոտորածները փակ թեմա է թուրքական հասարակության համար, դա այն պատճառով է, որ այդ ջարդերը պատկանում են երիտասարդ հանրապետության հիմնադրման հետ կապված իրադարձություններին:

Անշուշտ միամիտ կլինե՞ր 2001թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի խորհրդարանում կայացած քվեարկությունը 1915թ. ցեղասպանության ճանաչման վերաբերյալ համարել Ֆրանսիայի կողմից՝ անցյալում հայերի ապրած տանջանքների, ըստ ամենայնի, ընկալման արտահայտություն: Այս առիթով Թուրքիան հաճախ է նշում, որ լավ կլինե՞ր, որպեսզի նախ և առաջ «Ֆրանսիան օրենսդրական ճանապարհով ճանաչեր իր մեղավոր լինելը Ալժիրի ցեղասպանության՝ մարդկության դեմ կատարված հանցագործության համար»:

Այսուհանդերձ, ինչպիսին էլ որ քննի Ֆրանսիայի խորհրդարանի որոշման վերաբերյալ որդեգրած տեսակետը, այն չպետք է պատճառ դառնա մեկ անգամ ևս ժխտելու այն ամենը, ինչ Թուրքիայում իշխող կուսակցության կողմից իրականացվել է հայկական բնակչության նկատմամբ 1915-1917 թվականներին:

Այսպիսով, բազմաթիվ դեպքեր մատնանշում են, որ Ֆրանսիայի դեմ Թուրքիայի արձագանքը նպատակ է հետապնդում թաքցնել փաստերը և ոչ թե պաշտպանվել անհիմն մեղադրանքներից: Վերը նշված նշանակալից դեպքերից մեկը կարելի է համարել մի լրագրողի այս «բոցաշունչ» խոստովանությունը. «Թող որ հստակ լինի համաշխարհային հասարակական կարծիքի համար՝ անցյալում մենք պատժել ենք բոլոր այն անշնորհակալներին, ովքեր բացի այն, որ օգտվում էին մեր հողերից, ավելի ու ավելի էին սկսել ռոն-ձրգություններ անել մեր ունեցվածքի, մեր կյանքի և թուրքերի արժանապատվության հանդեպ: Մենք գիտենք, որ մեր հայերը ճիշտ էին ժամանակին, և եթե այսօր նմանատիպ վտանգներ ի հայտ գան, մենք առանց վարանելու ամիրաժեշտ ամեն ինչ կանենք»:¹ Այս խոսքերը ծայրահեղ զայրույթի պահին

ՀՈՂԱԾ-
ՆԵՐ



¹ Հոդվածը թարգմանվել է Ֆրանսիական «Լե Մոնդ Դիպլոմատիկ» հանդեսից, որի ներկա հատուկ համարը նվիրված է ցեղասպանության խնդրին: ("Le monde diplomatique", օգոստոս-սեպտեմբեր, 2004, էջ 67-71):

ասված արտահայտություններ չեն: Գիտական բովանդակություն ունեցող աշխատությունները նույնպես պարունակում են նույնատիպ արտահայտություններ:

Ինչու է «ցեղասպանություն» բառը Թուրքիային այդպիսի վրդովմունք պատճառում: Առավել քան դժվար է հասկանալ այդօրինակ արձագանքը, քանի որ Թուրքիան կարող էր, եթե ցանկանար, ճանաչել ջարդերի գոյության փաստը, միաժամանակ հայտարարելով, որ դրանց համար պատասխանատվություն չի կրում: Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Բեմալը տասնյակ անգամներ արտահայտվել է այդ հարցի վերաբերյալ՝ դատապարտելով ջարդերը, դրանք որակելով՝ խայտառակություն և պահանջելով, որ մեղավորները պատժվեն: Օսմանական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները, որոնք կազմակերպել էին ջարդերը, 1926 թվին դատապարտվեցին, չնայած՝ դատավարությունները վերաբերում էին այլ հանցագործությունների: Ամեն դեպքում, նրանցից շատերի նկատմամբ պատիժներն ի կատար ածվեցին: Այս փաստերի լույսի ներքո Թուրքիան կարող էր ափսոսանք հայտնել հայերի դեմ կատարված հանցագործությունների համար և բացատրել, որ դրանք կատարվել են Օսմանյան պետության և ոչ թե Հանրապետության կողմից:

* * *

Կռելեկտիվ հիշողության կորուստը, ինչով տառապում է երկիրը, հրապարակային քննարկումների հիմնական խոչընդոտներից մեկն է: Հիշողության այդ կորուստը, ինչն ընդհանրապես Թուրքիայում ընդունված է բոլորի կողմից, արդյունքն է այն հանգամանքի, որ թուրքերի պատմական գիտակցությունը տասնամյակների ընթացքում պարալիզացված է եղել: Հանրապետության հիմնադիրները բառացիորեն ոչնչացրեցին անցյալի հետ ունեցած կապերը: Ճշմարտություն է, որ ցանկացած ազգային պետություն իր հիմնադրման պահին լեգիտիմությունը հիմնավորելու նպատակով դիմում է իր պատմական արմատներին: Եվ եթե այդպիսիք չի գտնում՝ դրանք հորինում է: Ինչպես նկատում է Էռնեստ Աենմանը. «Մոռացումը և, նույնիսկ, պատմական անճշտությունն ազգի ստեղծման կարևոր գործոններից են»:² Երիտասարդ Թուրքական հանրապետության հիմնադիրներն ըստ ամենայնի կիրառեցին այդ կանոնը: Չնայած դրան, նրանք ստիպված եղան դիմակայել մի առանձնահատուկ դժվարության. Օսմանյան պատմության ընթացքում իսլամն աստիճանաբար կռելեկտիվ հիշողությունից ջնջել էր այն ամենը, ինչն առնչվում էր թուրքերի ինքնությանը: Եվ նրանք, իրենց ինքնության բացակայող արմատները սկսեցին փնտրել նախաօսմանյան ժամանակաշրջանում, միաժամանակ լռության մատնելով պատմության 600 տարիները:

Կատարելով մի շարք բարեփոխումներ, ինչպես օրինակ ազգային տարազի արևմտականացումը, նրանք փորձեցին անհայտացնել այն անցյալի հետքերը, որ 1928 թվականից ի վեր լատինական այբուբենն ընդունելու պատճառով անցանկալի, գրեթե անհասանելի էր դարձել երիտասարդ սերնդի համար: Այսպիսով կռելեկտիվ հիշողության բովանդակության մի կարևորագույն մասը պարսպվել է: Այն փոխարինվել է պաշտոնական պատմությամբ, գրված մի քանի թույլտվություն ստացած ակադեմիկոսների կողմից, և այդ պաշտոնական պատմությունը դարձել է միակ ճանաչ-

ված հղումը: Կարելի՞ է արդյոք պատկերացնել մի այնպիսի հասարակություն, որի համար մինչև 1928 թվականը տեղի ունեցած իրադարձությունները պարտունակ են այդքան առեղծվածներ...

«Անցյալի» հասկացությունն իսկ դարձել է մի մշտնջալատ հիշողության, և պատմական գիտակցության սահմանները կրճատվել են, սահմանափակվելով թուրքերի [այս սերնդի] անձնական վերապրածով: Այսպիսի պայմաններում արդյո՞ք կարելի է այդ հասարակությունից սպասել, որ վերջինս նախաձեռնի բննարկումներ իր սեփական պատմության վերաբերյալ: Այսուհանդերձ՝ բացի այդ ընդհանուր բնույթի բացատրությունից, պատմական գիտակցության բացակայության հիմնական պատճառն անհրաժեշտ է փնտրել այն հանգամանքի մեջ, որ թուրքական պատմությունը հիմնականում եղել է հաջորդական ցնցումների պատմություն:

1878-ից մինչև 1918 թիվն ընկած ժամանակահատվածում Թուրքիայի օսման ղեկավարները կորցրեցին կայսրության տարածքների 85 և բնակչության 75 տոկոսը: Կայսրության վերջին հարյուր տարիները կարելի է բնութագրել որպես շարունակական տրոհումների շրջան՝ ծանր ռազմական պարտությունների շարք, միջնորդված մի քանի հաղթանակներով, մեծ տերությունների ճնշման ներքո պարտադրված անմապաստ հրադարձներով: Առանց ընդմիջումների պատերազմների այդ ժամանակաշրջանը (ինչը հանգեցրեց տասնյակ հազարավոր մարդկանց կորստի) ընկալվում էր որպես անպատվության և տարբեր նվաստացումների ժամանակաշրջան:

* * *

Թուրքական օսմանական վերնախավը, գտնվելով փառահեղ անցյալի ճնշման տակ և տառապելով իր իսկ նկատմամբ ունեցած հարգանքի բացակայությունից, Առաջին համաշխարհային պատերազմը համարեց մի պատմական պատեհություն իր անցյալի մեծությունը վերականգնելու և վիրավորված ազգի արժանապատվությունը բուժելու համար: Սակայն շատ արագ այդ պատրանքն ի չիք դարձավ: Միավորման և կուրության այս համատեքստում ցեղասպանության վերաբերյալ որոշումը կարծեք մի վրեժխնդրության գործողություն լինեք, ուղղված նրանց դեմ, ովքեր համարվում էին այդ իրավիճակի պատասխանատուները: Հայերին, մեծ տերությունների և կայսրության ողջ քրիստոնեական ժողովուրդների փոխարեն, վերածեցին թշնամիների:

Օսման ղեկավարները, փաստորեն, հայերի հաշվին իրենց հաշիվներն էին մաքրում, այն հաշիվները, որ նրանք չէին կարողացել մաքրել այլոց հետ և այլուր: Այս հանգամանքով է բացատրվում այն համառությունը, որով ղեկավար այրերը ցանկանում են հանրապետությունը ներկայացնել որպես վերածնունդ, կամ էլ որպես բացարձակ սկիզբ: Ավելին՝ նրանք չրավարարվեցին այդ ժամանակաշրջանի վերքերը ամենայն ջանադրությամբ ջնջելով, վերաշարադրելով պատմությունը, վերածնելով նոր ազգային ինքնության գաղափարը: Նրանք նաև պատմեց ստեղծեցին հիշողությունը թաքցնելու համար, չհանդուրժելով որևէ ձեռնարկ, որ կարող էր կասկածի տակ դնել այդ կազմակերպված մոռացությունը: Մրանով է բացատրվում նրանց ակնհայտ «նրբազգացությունը» այն ամենի հանդեպ, ինչն այս կամ այն կերպ առնչվում է Հայկական հարցին:

Համարվում է, որ երկիրն այս միջոցով արդեն իսկ առողջացել էր և օժտված է բացարձակապես նորացված ինքնությամբ: Բայց, եթե բուժումը լիարժեք է, ինչո՞ւ չի կարելի խոսել ազատորեն: Իսկ իսկությունն այն է, որ հանրությանը դեռ չի կարողացել ստեղծել մի այնպիսի ինքնություն, որ ազատ լինի անցյալի վերքերից: Եվ քանի դեռ հանրությունը կերածարվի խոսել Հայոց ցեղասպանության մասին, այդ հանրությունը շատ քիչ հնարավորություն կունենա կառուցել «մեկ այլ ինքնություն»: Սակայն պետությունը ցանկանում է անփոփոխ պահել այն ոչ իրական պատկերացումը, որ հասարակությունն ունի իր մասին և պահպանել այն ցանկությունը, որով այդ նույն հասարակությունը ցանկանում է ապրել մի երևակայական աշխարհում:

* * *

Հանրապետության հիմնադրման և ջարդերի միջև եղած կապը նպաստում է, որ հայկական ցեղասպանությունը վերածվի տաբուի: Հանրապետության ղեկավար այրերը չեն վարանել հրապարակայնորեն ու ճշգրտորեն իրենց վերաբերմունքը արտահայտել այդ հարցի վերաբերյալ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ճանաչված ղեկավարներից մեկը՝ Հայկ Մենթեզը, հայտարարել է. «Եթե մենք արևելյան Անատոլիան չմաքրեինք հայ զինվորականներից, որոնք համագործակցում էին ռուսների հետ, մեր ազգային հանրապետության հիմնադրումը հնարավոր չէր լինի»: Ավելին՝ Հանրապետության առաջին ազգային ժողովի նիստերի ժամանակ արձանագրված են ելույթներ այս թեմայով. «Հայրենիքը փրկելու համար մենք ռիսկի դիմեցինք մարդասպաններ որակվելու համար»:³

Մեկ այլ ելույթ. «Ինչպես դուք գիտեք տեղահանման հարցը մի իրադարձություն էր, որ ամբողջ աշխարհի արձագանքն առաջացրեց և մեզ բռնաբար ի ցույց դրեց որպես մարդասպաններ: Մենք գիտեինք նախքան այդ գործողությունները սկսելը, որ քրիստոնեական աշխարհի վրդովմունքը և ատելությունը թափվելու է մեզ վրա: Ինչո՞ւ համար այդ դեպքում մենք մեր անունը կապեցինք մարդասպանների համբավի հետ: Ինչո՞ւ համար մենք ձեռնարկեցինք մի նույնքան կարևոր և բարդ խնդիր: Միայն այն պատճառով, որ անհրաժեշտ էր անել ամեն ինչ մեր հայրենիքի ջահը և ապագան պահպանելու համար, ինչը մեզ համար ավելի թանկ և սուրբ առաքելություն էր, քան մեր սեփական կյանքը»:

* * *

Ժամանակի հետ, այս խոսքերը, որոնք վկայում են, որ Հանրապետությունը հիմնվել էր ցեղասպանության վրա, իրենց հետքը թողեցին պաշտոնական պատմության վրա: Հակախմայերիալիզմը, ինչպես նաև սերը և հարգանքն այն զորքերի նկատմամբ, որոնք մասնակցեցին ազգային անկախության պատերազմին, վերածվեցին ազգային ինքնության անհրաժեշտ տարրերի: Այդ զորքերի ռզին, այդպիսով, 1960-ական թվականների ընթացքում դարձավ մի խորհրդանիշ՝ երիտասարդ հեղափոխականներին մի ողջ սերնդի համար:

Այս համոզմունքները կորցնելու վտանգն է հանդիսանում այն կարևորագույն պատճառը, ինչի համար թուրքերը մերժում են քննարկել Հայկական հարցը: Վտանգը կայանում է նրանում, որ հոդա կցնդեին Թուր-

քիան և աշխարհը բացատրելու առկա սովորական մոդելները: Ցեղասպանության վերաբերյալ քննարկումները կհանգեցնեին նրան, որ ակնհայտ կդառնար, որ պետությունը ոչ թե արդյունքն է հիմնականում հակաիմպերիալիստական պայքարի, այլ, ավելի շատ, հումանական և հայկական փոքրամասնությունների դեմ ձեռնարկված պատերազմի: Ավելին՝ ակնհայտ կլինեք, որ զինվորների մի զգալի մասը, որոնք հերոսության օրինակներ էին, ուղղակիորեն մասնակցել էին ցեղասպանությանը կամ հարստացել՝ թալանելով հայերին:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից դեռևս առաջ պարտության հետանկարը հաշվի առնելով, Անատոլիայից դուրս գալու և ազգային դիմադրություն կազմակերպելու ծրագրեր էին մշակվել: 1918 թվականից ի վեր այդ պլանները կիրառվեցին: Ասոցիացիաները, ազգային դիմադրության շարժում կազմակերպող միությունները («Խրավունքների պաշտպանություն», «Պառակտման մերժում»), հիմնվել էին կամ Թալեաթ փաշայի (1913-17թթ. Ն. Գ. մախարար), կամ Էնվեր փաշայի (նույն ժամանակաշրջանում պաշտպանության մախարար), կամ նրանց ղեկավարած կոմիսարիատի⁴ հաստուկ հրամաններով: Այդ միությունները զլխավորապես, հիմնադրվել էին այն ռեզիդենտում, որտեղ հումանական կամ հայկական վտանգն արժանահավատ էր թվում:

* * *

1918թ. հոկտեմբերի 30-ին, բրիտանացիների հետ հումանական Մունդրոս քաղաքում կապիտուլյացիայի վերաբերյալ համաձայնագիրը կնքելուց հետո կազմակերպվեցին առաջին հինգ դիմադրության կոմիտեները՝ երեքը հայերի դեմ, իսկ մնացած երկուսը՝ հույների: Նրանց հիմնադիրները «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներն էին, որոնց ղեկավարներից ոմանք փնտրվում էին բրիտանացիների կողմից ցեղասպանությանը մասնակցելու համար: Կոմիսարիատը, այլ առաքելությունների շարքում, պետք է նրանց թաքցներ հետապնդումներից և նրանց համար ապաստան ապահովեր Անատոլիայում: Այդ կազմակերպությունը, այսպիսով, միաժամանակ խորհրդանշել էր հայերի ցեղասպանության և Անատոլիայի դիմադրության շարժման:

* * *

Մեկ այլ հանգամանք կապված է այն նոր ի հայտ եկած խավի հետ, որը հարստացավ ցեղասպանության հաշվին և որը ազգային շարժման սոցիալական հիմքերից մեկը հանդիսացավ: Մարդիկ, որոնք բարգավաճել էին թալանի միջոցով վախճնում էին, որ հայերը հետ կվերադառնան, կվերցնեն իրենց ունեցվածքը և վրեժխնդիր կլինեն: Ինչը փաստորեն տեղի ունեցավ, օրինակ, Քուկուրտվայի ռեզիդենտում, որտեղ կենդանի մնացած հայերը օկուպացիոն ուժերի հետ վերադարձան՝ վերցնելու համար այն ամենը, ինչն իրենց էր պատկանում: Այս պատճառով է, որ թուրքերի այդ խավը մոտեցավ ազգային ազատագրական շարժմանը և նույնիսկ, որոշ տեղերում, իրենք նախաձեռնեցին այդպիսի շարժման կազմակերպումը: Նրանցից ոմանք հայտնվեցին Մուսթաֆա Քեմալի մերձակա շրջապատում (օրինակ Թոփալ Օսմանը, որը հետագայում դարձավ նրա անձնական քիկնա-

պահների հրամանատարը): Այն միջոցառումները, որ ձեռնարկվել էին 1920թ. հունվարի 8-ին Ստամբուլի կառավարության կողմից հայերի ունեցվածքը վերականգնելու համար, 1922թ. սեպտեմբերի 14-ին չեղյալ համարվեցին: Անկարայի կառավարությունը գիտակցում էր, որ ամերիաժեշտ է պաշտպանել այն անձանց շահերը, ովքեր նպաստել էին Ազգային պետության հիմնադրմանը:

* * *

Մարմարայի, Էգեյան և Սև ծովերի շրջաններում գործած այդ առաջին ռազմական խմբերի կազմակերպողներին և բարձրաստիճան պաշտոնյաներին փնտրել են ջարդերի կազմակերպման համար: Այս հանգամանքը հանդիսանում է երրորդ կապող տարրը հայերի ցեղասպանության և Հանրապետության միջև: Դիմադրության շարժման կազմակերպման համար Մուսթաֆա Զեմալը փաստորեն լայնորեն օգտվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների ակտիվ օժանդակությունից, այն անդամների, որոնց փնտրում էին հայերի դեմ կատարած հանցագործությունների համար: Հետագայում այդ մարդիկ զբաղեցրեցին պատասխանատու պաշտոններ: Այսպես՝ Մուկրու Կալլան, Ն. Գ. Նախարարը և Հանրապետական ժողովրդական կուսակցության գլխավոր քարտուղարը, որ հիմնադրվել էր Մուսթաֆա Զեմալի կողմից, «տեղահանման» ժամանակ զբաղեցնում էր միգրանտ բանկչության տեղավորման գլխավոր տնօրենի պաշտոնը: Այդ մարմինը պաշտոնապես պատասխանատու էր տեղահանման համար: Տեղերում ներկա գերմանացի հյուպատոսները փոխանցել են Մուկրու Կալլայի հետևյալ խոսքերը. «ամերիաժեշտ է բնաջնջել հայկական ցեղը»:

Մեկ այլ դեմք՝ Մուսթաֆա Արդուհալիկ Ռեմդան, ջարդերի ժամանակ զբաղեցնում էր պրեֆեկտի պաշտոնը նախ՝ Բիթլիսում, այնուհետև՝ Հալեպում: Գերմանացի հյուպատոս Ռուպերդ նրան նկարագրում էր որպես մեկի, որը «զբաղված էր ամբողջությամբ հայերի բնաջնջմամբ»: 1919թ. երրորդ բանակի հրամանատար Վեհիպ փաշան գրում է, որ պատերազմի ժամանակ (1916թ. փետրվարից հետո), այդ նույն Ռեմդան Մուշի շրջանում կենդանի այրել է հազարավոր մարդկանց: Հետագայում նա դարձավ նախարար և ազգային ժողովի նախագահ:

Արիֆ Ֆեզին, որ Դիարբեքիրում ջարդերը կազմակերպելու համար բանտարկված էր Մաթայում՝ 27 43 համարի տակ, 1922-23թթ. դարձավ տարածքային կառավարման դելեգատ-նախարար: Բնտարկյալ N 2805-ը՝ Ալի Մեմանի Բեյը, որ հարստացել էր ցեղասպանության ժամանակ, 1924-26թթ. դարձավ առևտրի նախարար: Ավելին՝ Տրուստու Արասը, որ սպանված հայերի թաղման սանիտարական հանձնաժողովի անդամ էր, հետագայում զբաղեցրեց կարևոր պաշտոններ Անկարայում՝ 1925-38թթ. նա դարձավ արտաքին գործոց նախարար:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ ազգային անկախության պատերազմը վարելու համար Մուսթաֆա Զեմալը օգտագործեց այնպիսի անձանց, ովքեր պատկանում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը և ովքեր հետապնդվում էին հայ և հույն բնակչության դեմ կատարված հանցագործությունների համար, ինչպես նաև այն մարդկանց, ովքեր ստիպված մասնակցեցին դիմադրության շարժմանը, վախենալով հույների և հայերի վրեժխնդրությունից: «Միություն և առաջադիմություն»

կուսակցության փնտրվող բոլոր անդամների և, մասնավորապես, նրանց համար ովքեր «Հատուկ կազմակերպության» շարքերում ուղղակիորեն իրականացրել էին ջարդերը, այս մարդկանց համար անկախության պատերազմին մասնակցելը՝ իրենց գոյությունն ապահովելու խնդիր էր: Քանզի այդ մարդիկ հայտնվել էին հետևյալ այլընտրանքի առջև՝ հանձնվել և ծանր պատիժ կրել, նույնիսկ՝ մահապատժի ենթարկվել կամ մասնակցել դիմադրության շարժմանը: Մուսթաֆա Քեմալի մի մոտիկ բարեկամ՝ Ֆալիհ Ռիֆքի Աթայը, գերագանց ձևով նկարագրում է իրավիճակը. «Երբ պատերազմի ավարտին բրիտանացիները և նրանց դաշնակիցները որոշեցին հաշիվ պահանջել «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատուներից հայերի ջարդերի համար, բոլոր նրանք, ովքեր կարող էին այդ պատճառով պատժվել, զենք վերցրին և մասնակցեցին դիմադրության շարժմանը»:⁵

Այս ողջ պատկերը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ այն պատճառը, ինչի համար հայերի ցեղասպանությունը վերածվել է տաքոյի: Ընդունել, որ «հայրենիքը փրկած մեծ հերոսների» մեջ եղել են մարդասպաններ և գողեր, անկասկած կունենար բացարձակապես այլ ազդեցություն: Բացի այդ՝ ժխտման ճանապարհը կարծես թե ավելի դյուրին է բոլոր նրանց համար, ովքեր վախենում են որևէ ձեռնարկումից, որ կարող է սասանել թուրքերի համոզմունքը Հանրապետության և ազգային ինքնության վերաբերյալ: Սակայն գոյություն ունի մեկ այլ ճանապարհ՝ հանուն ժողովրդական արժեքների, երկրի՝ իր սեփական անցյալի նկատմամբ անկողմնակալ մոտեցման որդեգրման ճանապարհը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Ամիթ», Ստամբուլ, 2001թ., 12 փետրվար:

² Էռնեստ Ռենան. «Ինչ բան է ազգը», դասախոսություն Սորբոնում, Փարիզ, 1882թ., մարտի 11:

³ Պատմաբան Յուսուֆ Իքմեթ Բայուր. Թուրքական հեղափոխության պատմություն, II հատոր, IV գլուխ, Թուրեհայի պատմության ինստիտուտ, 1988թ:

⁴ Կոմիսարիատը կոչված էր կազմակերպել դիմադրությունը և օգնել քաջցնել բոլոր նրանց, ում փնտրում էին հայերի ջարդերի համար:

⁵ Ֆալիհ Ռիֆքի Աթայ. Քանքայա, Աթաթուրքը իր ծննդյան օրվանից մինչև մահը, Ստամբուլ, 1980թ.:

Թարգմանությունը՝ ՆՈՒՆԵ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻ